ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ANQA-2024/108**

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

27 ապրիլի 2024 թ. N 108

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

**Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին**

Հաստատության լրիվ անվանումը՝ «**Գավառի պետական բժշկական քոլեջ**» **ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ,Նալբանդյան 91/1

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. ապրիլի 27-ին քննարկեց **«Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի** (այսուհետ՝ ԳՊԲՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

**Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.**

| | |
|---|---|
| **դիմում-հայտի ներկայացում** | 11 հունվարի 2023 թ. |
| **ինքնավերլուծության ներկայացում** | 05 մայիսի 2023 թ. |
| **փորձագիտական այցի իրականացում** | 25-28 սեպտեմբերի 2023 թ. |
| **փորձագիտական զեկույցի ներկայացում** | 30 նոյեմբերի 2023թ. |
| **թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում** | 29 դեկտեմբերի 2023թ. |

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **«Կառավարում և վարչարարություն» և «Մասնագիտության կրթական ծրագրեր»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Քոլեջը բժշկության ոլորտում իրականացնում է Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

Կրթական ծրագրերի վերջնարդյունքները հստակ սահմանված չեն և լիարժեք չեն արտահայտում ՊԿՁ-ներով սահմանված ուսումնառության արդյունքների ձեռքբերում: Աշխատաշուկայի կարիքների վերլուծության հիմքով կրթական ծրագրերի տեղայնացում քոլեջը չի իրականացրել: Թեև քոլեջը պարբերաբար վերանայում է իր կրթական ծրագրերում կիրառվող մեթոդները և գնահատման չափանիշները, սակայն դրանք դեռևս միանսական և ինստիտուցիոնալ չեն: Չի գործում կրթական ծրագրերի համեմատական վերլուծության և լավագույն փորձի տեղայնացման քաղաքականությունը, մշակված մեխանիզմները չեն նպաստում դրա իրագործմանը: Մշտադիտարկման և հետագա բարելավման համար սահմանված գործիքների կիրառումը չի հանգեցնում ծրագրերի շարունակական բարելավմանն ու աշխատաշուկայի կարիքներից բխող վերջնարդյունքների ձևավորմանը:

Շնորհվող որակավորումների արժանահավատության ապահովման համար քոլեջը շարունակաբար ջանքեր է գործադրում՝ ներգրավելով որակյալ դասախոսական կազմ: Քոլեջն ունի դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն, կազմը շարունակաբար համալրվում է պրակտիկ ոլորտի գործատու մասնագետներով: Ներդրվում են դասախոսական կազմի կայունությանը և երիտասարդացմանը նպաստող մեխանիզմներ: Իրականացվում է դասախոսական կազմի աշխատանքների պարբերաբար գնահատում, լավ փորձի տարածման ներքին միջոցառումներ:

Ունի բավարար վարչական և ՈւՕ կազմ ուսումնական գործընթացին աջակցելու համար;

Կրթական ծրագրերի իրականացման համար քոլեջում հիմնականում առկա են անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ: Գոլեջն իր ֆինանսական միջոցների շնորհիվ փորձում է շարունակաբար զարգացնել իր ենթակառուցվածքներն ու ռեսուրսները: Լիարժեք և օպտիմալ կերպով

օգտագործում է Գավառի բժշկական կենտրոնի, գործընկեր ատամնաբուժարանների և դեղատների ռեսուրսները, հասանելի են ուսանողների համար ինչպես գործնական դասընթացների, այնպես էլ պրակտիկաների կազմակերպման համար:

Քոլեջը ստեղծում է անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված գործընթացների միջոցով: Ներդրվել են ռեսուրսների կիրառելիության գնահատման և որակի ապահովման որոշ գործիքներ: Կանոնակարգվում են փաստաթղթաշրջանառության գործընթացները,

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը***

Քոլեջի իրականացրած գործունեությունը համապատասխանում է սահմանված առաքելությանը: Ներքին և արտաքին շահակիցները կիսում են հաստատության տեսլականը և կարևորում քոլեջի դերը տարածաշրջանում գործող բուժհաստատությունների և դեղագործական ընկերությունների կարիքներին համահունչ մասնագետների պատրաստման գործում: Ռազմավարական նախորդ շրջափուլից հետո բարելավվել են ռազմավարական պլանավորման մեխանիզմները:

Քոլեջում դեռևս չի իրականացվում գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարում: Քոլեջի կառավարման համակարգում ուղղահայաց և հորիզոնական գործառնական կապերը լիարժեքորեն չեն գործում, վերևից ներքև և ներքևից վերև հաշվետվողականության գործընթացներն անկատար են: Ռազմավարական և կարճաժամկետ պլանավորման գործընթացներում առկա է խզվածք: Կրթական ծրագրերի կառավարման և պատասխանատվության բաշխումը համաչափ իրականացված չէ:

Տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմներ և համակարգեր կան, սակայն հավաքագրված տվյալները հիմնականում չեն դրվում կառավարչական որոշումների կայացման հիմքում:

Որակի ապահովման մշակույթը ձևավորվում է, զգալի աշխատանքներ են իրականացվել որակի ապահովման համակարգի ներդրման համար, ինչը նպաստել է անհրաժեշտ կանոնակարգող փաստաթղթերի մշակմանը և ներդրմանը հաստատությունում: Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է «Որակի ապահովման քաղաքականություն»:

Որակի ապահովման գործընթացների իրականացման համար հատկացվել է մարդկային և նյութական ռեսուրսներ: Քոլեջում որոշակիորեն ներդրված են շահակիցների կարիքների վերհանման գործիքներ, ձևավորվել են տվյալների հավաքագրման և վերլուծության որոշ մեխանիզմներ, որոնք նպաստում են քոլեջի գործունեության ոլորտների շարունակական բարելավմանը: Քոլեջը փորձում է ապահովել ՈԱ գործընթացների մասին տեղեկատվության հասանելիությունը շահակիցների շրջանում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ՄՈՒՀ-ը կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ուսանողների հավաքագրման ու ընդունելության մասին իրազեկման ուղղությամբ՝ ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներին: Իրականացվող գործընթացները նպաստել են ուսանողների կայուն ներհոսքին և դիմորդների թվաքանակի դինամիկ աճին: Այս գործընթացում ակտիվորեն ներգրավված են նաև գործատուները՝ ներկայացնելով մասնագիտությունների գրավչությունը և աշխատաշուկայի կադրային պահանջարկը դիմորդների հետ հանդիպումների ու հավաքագրման միջոցառումների ընթացքում:

Առկա են կրթական կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ: Ուսանողներին տրամադրվում է խորհրդատվություն և աջակցություն դասախոսական և վարչական կազմի կողմից, գործում են

կարիերայի ուղղորդմանը միտված ծառայություններ: Ուսանողներին տրվում են ստեղծագործական-վերլուծական բնույթ ունեցող առաջադրանքներ: Քոլեջն ունի ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման որոշ մեխանիզմներ:

Քոլեջը կանոնակարգել է հետազոտական աշխատանքների իրականացման ընթացակարգերը, սահմանել բժշկական կրթության առանձնահատկություններին համահունչ հետազոտության իրականացում: Հետազոտական գործընթացները կանոնակարգելու նպատակով 2023 թ.-ից քոլեջում մշակվել և գործարկվում է հետազոտական աշխատանքների իրականացման ուղեցույց, որտեղ պարզաբանվում են հետազոտական և արտալսարանային աշխատանքների տեսակները, անհատական և խմբային հետազոտական աշխատանքների կատարման չափանիշները, պահանջները, ներկայացված է հետազոտական աշխատանքներ կատարելու օրինակելի պլանը:

Ուսանողներն իրենց հետազոտական բնույթի աշխատանքներում առաջնորդվում են ուղեցույցի պահանջներով: Դասախոսներն աջակցում են ուսանողների վերլուծական անհատական և խմբային աշխատանքների իրականացմանը: Ուսանողներին տրվող առաջադրանքները նպաստում են վերլուծական և հետազոտական կարողությունների ձևավորմանը: Առկա են ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման մեխանիզմներ:

ԳՊԲՔ-ում կանոնակարգված են հաշվետվողականության գործընթացները, ձևավորվել են գործընթացների թափանցիկության և հասարակությանը հասանելիության ապահովման գործիքներ, առկա են հետադարձ կապի ապահովման որոշ մեխանիզմներ: Քոլեջն իրականացնում է հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման միջոցառումներ:

Քոլեջը համագործակցում է տարածաշրջանում առկա բժշկական հաստատությունների և դեղագործական կազմակերպությունների հետ, համատեղ օգտագործում է նրանց ռեսուրսները:

Քոլեջը միջազգայնացման փորձ չունենալով հանդերձ՝ ակտիվ համագործակցում է ՀՀ-ում գործող միջազգային կառույցների (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, Սեյվ դը չիլդրեն, Վորլդ վիժն) հայաստանյան գրասենյակների հետ՝ իրականացնելով դասընթացներ, վերապատրաստումներ և տարաբնույթ նախաձեռնություններ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

**ՈՐՈՇԵՑ**

1. **«Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

   Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում ու վարչարարություն» և «Մասնագիտության կրթական ծրագրեր»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - քոլեջի առաքելության հստակեցմանը՝ միավորելով ներկայացված 3 առաքելությունները մեկ միասնական ամբողջության մեջ,

- յուրաքանչյուր նպատակի համար նախատեսված որակական և քանակական ցուցիչների և դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմների հստակեցմանը,
- ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների բարելավմանը,
- դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի պլանավորման և ապահովման մեխանիզմների ներդրմանը,
- հետազոտական ուղղությամբ քոլեջի հավակնությունների և ամբիոնային հետաքրքրությունների սահմանմանը,
- տվյալների հավաքագրման և մշակման մեխանիզմների բարելավմանը,
- դասախոսների և ուսանողների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը,
- միջազգային փորձի ուսումնասիրման և համագործակցությունների հաստատման մեխանիզմներ և գործիքակազմ ունենալու անհրաժեշտությանը,
- տեղեկատվության տրամադրման, հասանելիության, թափանցիկության և հետադարձ կապի արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությանը,
- որակի ապահովման մեխանիզմների համակարգմանը՝ կանոնակարգելով դրանց կիրառման պարբերականությունը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «**Գավառի պետական բժշկական քոլեջ**» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

**Հավատարմագրման Հանձնաժողովի**
**նախագահ** **Ա. Սաղյան**
2024 թ. ապրիլի 27
ք.Երևան